



221. ՄՈՎԼԱՆ ՈՒ ԳՈՂԵՐԸ

Մովլան մի հետ իրանց տանը նստած ժամանակ եղում ա տեսնում էրկու հատ կյողեր նի մտան իրանց տոներ:

Մովլան ասում ա,— Խոսելու չեմ, տեսնամ սրանք հինչ ե՞ն անում:

Շատ ըսպասիլան ետը, մովլան եղում ա տեսնում, վեր իրանց տան իլած շիլածը լոխ շիլակում են տանում, մովլան իրան քոնիլածի տեղ ա տնում: Վերը էն ա տուս կամ, որ մովլի տակի դիշակն էլ են հանում: Մովլան էլ հա շի խոսում: Տրանք որ շիլակում են, էտ ժամանակ մովլան տեսնում ա, վեր տանը ոչ մի պան շիմնաց, լոխ տարան: Վերցնում ա կնգանը շիտրակը, շիլակում, հետան ինգյում:

Էտ մարթիք շատ են քլընում, քիչ են քլընում, հունց ա պըտահում, տրանք մի տեղ հանգստանում են, մովլան էլ քլընում ա տրանց մոտը հանգստանում:

Հանգստանալու ժամանակ տրանք մովլին հըրցնում են.— Մովլա՛, պա տու էտ շտեղ ե՞ս քլնում:

Տա ասում ա.— Հունց թի՞ շտեղ ես քլնում, պա մեր տոնը քոչում չե՞նք ծեր տոն:

